ՊԵՏԱԿԱՆ ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ԴԵՐԸ ԵՎ ՆՇԱՆԱԿՈՒԹՅՈՒՆԸ ՀՀ ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ՀԱՄԱԿԱՐԳՈՒՄ

ՄԱՐԱՏ ՄԱՆՈՒՉԱՐՅԱՆ

Բանալի բառեր – ֆինանսական համակարգ, ֆինանսական կառավարում, պետություն, բյուջետային համակարգ, հանրային ֆինանսներ, ծախսեր և եկամուտներ, կառավարման օբյեկտ և սուբյեկտ:

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

Ինչպես նշում է հայտնի տնտեսագետ Ի. Շիլլը՝ «Կառավարել ֆինանսները՝ նշանակում է այս կամ այն չափով կառավարել ժողովրդի ամբողջ նյութական և գիտակցական-հոգևոր ուժերը[1]»:

Գլոբալացման ներկա պայմաններում ինչպես յուրաքանչյուր երկիր, այնպես էլ Հայաստանի Հանրապետությունը կանգնած է բազմաթիվ մարտահրավերների առջև՝ տարածաշրջանային կայունություն, ինքնիշխանության ամրապնդում, պայքար ահաբեկչության, արտաքին պետությունների ագրեսիվ քաղաքականության դեմ, տարածքային ամբողջականություն, աշխարհաքաղաքական վերակազմավորումներ և բազմաթիվ այլ խնդիրներ, որոնց լուծման համար անհրաժեշտ է ունենալ հզոր տնտեսություն և ֆինանսական մեծ հնարավորություններ: Իսկ ուժեղ պետության գրավականը կայուն տնտեսությունն է: Անարդյունավետ պետական տնտեսական քաղաքականությունը կարող է երկարատև ու խորը ճգնաժամի հանգեցնել: Պետության տնտեսական դերը կապված է նաև քաղաքացիների գույքային իրավունքների, բանկային ավանդների և այլ իրավունքների պաշտպանության հետ[2] :

Պետության բոլոր գործառույթների իրականացման համար անհրաժեշտ ֆինանսական ռեսուրսները կենտրոնացվում են տարբեր մակարդակի բյուջեներում՝ ձևավորելով ՀՀ բյուջետային համակարգը: Հայաստանի Հանրապետության բյուջետային համակարգի կարևորագույն խնդիրը պետական կառավարման և տեղական ինքնակառավարման մարմինների գործառույթների իրականացումն է և դրա համար անհրա-

---

[1] **Шилль И**. Современная теория финансов и влияние ее на финансовою администрацию в Западно-европейских государствах. СПБ, 1860, стр.250.

[2] **Бабич А.М., Павлова Л.Н.,** Государственные и муниципальные финансы, учебник для вузов, 2-е изд., перераб. И доп., Москва.,"ЮНИТИ-ДАНА", 2012, стр. 6.

ժեշտ ֆինանսական միջոցների կենտրոնացումը: Բյուջետային ծախսերը դիտարկվում են որպես ֆինանսական հարաբերությունների մի մաս, որը կապված է պետության կենտրոնացված դրամական ֆոնդերի օգտագործման, կառավարման մարմինների կողմից սահմանադրական նորմերի պահպանման, բյուջետային համակարգի բոլոր մակարդակներում ֆինանսական ռեսուրսների ձևավորման, կենտրոնացված ֆոնդերի վերաբաշխման և պետական այլ գործառույթների իրականացման հետ[1]: Ֆինանսների տեսության և ֆինանսական մենեջմենթի պրակտիկայում հիմնական դերը նախնառաջ տրվում է հիմնարար հասկացությունների հավաքածուի մշակմանը, ֆինանսական կառավարման հիմնական կատեգորիաների տարանջատմանը և մեկնաբանմանը, ՀՀ հանրային հատվածի կազմակերպությունների տեսանկյունից ազգային տնտեսության և միջազգային հարաբերություններում գործունեության սկզբունքների ձևավորմանը, ֆինանսական շուկայում համընդհանուր գործիքների մշակմանը, որոնք անհրաժեշտության դեպքում կարող է օգտագործել ցանկացած կազմակերպություն: Հենց ֆինանսների ժամանակակից տեսության շրջանակներում են ձևակերպվել ֆինանսական կառավարման հիմնադրույթները, ֆինանսական կառավարման մեթոդաբանությունը, գործիքները և տրվել դրանց տեսական ու կիրառական հիմնավորումները:

ՎԵՐԼՈՒԾՈՒԹՅՈՒՆ

Ընդհանրապես, կառավարումը[2] տնտեսական օրենքների պահանջներին համապատասխան նյութական և հոգևոր բարիքների, ծառայությունների ստեղծմանը նպատակաուղղված աշխատանքի վրա համակարգված կարգավորիչ ներգործություն է: Այս բնորոշման առավելությունն այն է, որ մատնանշում է բազմաբնույթ կազմակերպությունների և պետության գործունեության համար առավել ընդհանուր, կառավարչական ներգործության ենթակա հատկանիշը՝ նպատակամետ աշխատանքը և դրա քանակական ու որակական հայտանիշների փոփոխության եղանակը: Հասարակության սոցիալ-տնտեսական գործընթացների կառավարման համակարգում անհրաժեշտ է առանձնացնել ֆինանսական կառավարումը, որն իրենից ներկայացնում է ֆինանսական ռեսուրսների և դրանց շարժի ղեկավարմանն ուղղված կառավարման համակարգ: Ինչպես մյուս կառավարման համակարգերը՝ ֆինանսական կառավարումը ևս իրագործվում է

---

[1] **Բոստանջյան Վ., Կիրակոսյան Գ.,** Հարկաբյուջետային քաղաքականության կատարելագործման հիմնահարցերը Հայաստանի Հանրապետությունում, Երևան, 2004, էջ 84 :

[2] Յու. Սուվարյան, Մենեջմենթ, Երևան, Տնտեսագետ, 2002, էջ 14.

պլանավորման, կազմակերպման, մոտիվացիայի և վերահսկողության հիմնական գործառույթների իրականացմամբ: Ժամանակակից շուկայական տնտեսությունում ֆինանսական կառավարման համակարգն[1] իրենից ներկայացնում է միջոցների, գործիքների, ինչպես նաև ֆինանսական ինստիտուտների փոխկապակցված համակարգ, որն ապահովում է ֆինանսական համակարգի ամբողջական և նրա առանձին մակարդակների կայուն և արդյունավետ գործունեությունը՝ նպաստելով տնտեսության իրական հատվածի զարգացմանն ու սոցիալական հրատապ խնդիրների լուծմանը: Անդրադառնալով հանրային ֆինանսներին, կարող ենք նշել, որ հանրային ֆինանսները գիտություն է տնտեսության մեջ պետության դերի մասին[2]: Դա տնտեսագիտության այն ճյուղն է, որը գնահատում է պետական եկամուտներն ու ծախսերը[3]: Հանրային ֆինանսների կարևորագույն նպատակներն են.

- ռեսուրսների արդյունավետ տեղաբաշխումը,
- եկամուտների վերաբաշխումը,
- մակրոտնտեսական կայունության ապահովումը:

Անմիջականորեն պետական ֆինանսական կառավարումն իրականացվում է միայն պետական ֆինանսների մասով: Հայաստանում, ինչպես և տնտեսապես զարգացած բոլոր երկրներում, պետական ֆինանսների կառավարումը կարգավորվում է ֆինանսական օրենսդրությամբ՝ ամենաբարձր օրենսդրական մարմինների միջոցով: Դա վերաբերում է պետական բյուջեի հաստատմանը և դրա կատարման հաշվետվությանը, հարկերի առանձին տեսակների ներդրմանը կամ վերացմանը, պետական պարտքի առավելագույն չափի հաստատմանը և այլն: Պետական ֆինանսների կառավարումը նպատակ ունի ապահովել[4].

ա) պետության, իրավաբանական և ֆիզիկական անձանց տնտեսական շահերի հարաբերական հավասարակշռությունը.

բ) դեֆիցիտից զերծ պետական բյուջե.

գ) ազգային արժույթի կայունությունը՝ որպես ֆինանսական հարաբերությունների հիմնարար տարր:

Որպես ֆինանսական կառավարման գործիքներ, հանդես են գալիս՝ պլանավորումը, վերահսկողությունը, կազմակերպումը և տեղեկատվական ապահովումը:

---

[1] **Медведева С. Н., Кутузова Т. Ф.,** Финансы: Учебное пособие. СПБ, ГУАП. 2017. Стр. 36.

[2] Gruber Jonathan (2005): *Public Finance and Public Policy*: New York: Worth Publications: էջ 2:

[3] Jain, P C (1974): *The Economics of Public Finance*.

[4] **Финансы:** учеб. --2-е изд., перераб. и доп./иод ред. В. В. Ковалева.—М.: ТК Велби, Изд-во Проспект, 2007.с. 37.

Ֆինանսական կառավարումը, ինչպես և ցանկացած այլ կառավարում, ունի իր՝

ա) կառավարման սուբյեկտը, այսինքն՝ ֆինանսական մարմինների, ինստիտուտների և կազմակերպությունների ամբողջությունը, որը կոչվում է ֆինանսական համակարգ,

բ) կառավարման օբյեկտը հանդես է գալիս որպես ֆինանսական հարաբերությունների ամբողջություն և կոչվում է ֆինանսների համակարգ:

Ֆինանսական կառավարումը կարգավորում է հետևյալ խնդիրները[1].

1) հասարակության սոցիալ-տնտեսական զարգացման և պետության գործունեության համար անհրաժեշտ ռեսուրսային բազայի ձևավորում.

2) պետության ֆինանսական ռեսուրսների արդյունավետ և նպատակային օգտագործումը.

3) ֆինանսական ռեսուրսների արդյունավետ և նպատակային օգտագործման նկատմամբ վերահսկողությունը:

Կառավարման նպատակը պետության ֆինանսական ռեսուրսների լիարժեք մոբիլիզացումն է և դրանց արդյունավետ օգտագործումը՝ տվյալ պահին պետության առջեւ ծառացած խնդիրներին համապատասխան: Այլ կերպ ասած, ֆինանսական կառավարման վերջնական նպատակը կոնկրետ ֆինանսական քաղաքականության մշակումն է:

Ելնելով վերոգրյալից՝ կարող ենք եզրակացնել, որ պետական ֆինանսական կառավարումը ֆինանսական համակարգի (ֆինանսական մարմինների) նպատակային ազդեցությունն է ֆինանսական հարաբերությունների վրա՝ կոնկրետ ֆինանսական քաղաքականություն մշակելու և իրականացնելու նպատակով[2] (տես՝ Գծապատկեր 1) :

Շուկայական հարաբերությունների պայմաններում, ինչպես բոլոր պետությունները, այնպես էլ Հայաստանի Հանրապետությունը հանդիսանում է տնտեսության պետական կարգավորման կարևորագույն տնտեսական կարգավորողներից մեկը: Իր հերթին, պետական ֆինանսական կառավարումը ինքնին ամբողջությամբ կախված է նրանից, թե որքան ճիշտ է կառուցված պետական կառավարման համակարգը, որի որակից է մեծապես կախված ՀՀ պետական բյուջեի հարկային և այլ եկամուտների չափը, որն անհրաժեշտ է մեր պետությանը հանրային գործառույթներն իրականացնելու համար:

---

[1] Финансы : учебник / **Ю. С. Долганова, Н. Ю. Исакова, Н. А**. Истомина [и др.] ; под общ. ред. канд. экон. наук, доц. Н. Ю. Исаковой ; Мин-во обр. и науки РФ. — Екатеринбург : Изд-во Урал. ун-та, 2019. с.47.

[2] Գծապատկերը կազմվել է հեղինակի կողմից:



նպաստումը

Գծապատկեր 1. Ֆինանսական կառավարման համակարգը ՀՀ-ում

ՀՀ ֆինանսական համակարգը կոնկրետ ֆինանսական մարմիններ-ի և ինստիտուտների ամբողջություն է, որն իրականացնում է պետական ֆինանսական քաղաքականության մշակումն ու իրագործումը: Որպես կանոն, ֆինանսական համակարգն ընդգրկում է պետության բոլոր ֆի-նանսական ինստիտուտների ամբողջությունը, սկսած երկրի բարձրա-գույն ղեկավարությունից մինչև կազմակերպությունների ֆինանսական ստորաբաժանումները: Ֆինանսական մարմինները, պետության անունից իրականացնում են ֆինանսական կառավարումը, այսինքն՝ վարվող ֆի-նանսական քաղաքականության կատարման շրջանակներում նպատա-կաուղղված կերպով ազդում են ֆինանսական հարաբերությունների վրա: ՀՀ ֆինանսական համակարգի կազմում ընդգրկված են ինչպես օրենսդիր, այնպես էլ գործադիր իշխանության մարմիններ՝ Ազգային Ժողովը, ֆի-

նանսների նախարարությունը, ՊԵԿ-ը, Հաշվեքննիչ Պալատը, Կենտրոնական Բանկը, Էկոնոմիկայի նախարարությունը :

Ֆինանսական մեխանիզմը՝ դա ֆինանսական համակարգի սուբյեկտի (պետության) ազդեցության միջոցն է օբյեկտի (ֆինանսական հարաբերությունների) վրա, ֆինանսների գործառույթների գործնական իրականացման դրսևորման արտաքին ձևը[1]: Ֆինանսական մեխանիզմը կարող է ներկայացվել որպես պետության կողմից ֆինանսների օգտագործման տարբեր ձևերի և մեթոդների ամբողջություն՝ տնտեսական համակարգում համապատասխան ֆինանսական քաղաքականություն ապահովելու համար: Ֆինանսական մեխանիզմը բաղկացած է մի շարք փոխկապակցված ենթահամակարգերից.

ՀՀ պետական ֆինանսական կառավարման գործընթացը կարելի է ներկայացնել որպես մի շարք ֆունկցիոնալ տարրերի ամբողջություն[2] (տես՝ գծապատկեր 2):



Գծապատկեր 2. ՀՀ պետական ֆինանսական կառավարման ֆունկցիոնալ տարրերը:

ՀՀ ֆինանսական համակարգում պետական ֆինանսների կառավարումը համալիր ոլորտ է, որին այս կամ այն չափով իրենց մասնագիտական գործունեության ընթացքում առնչվում են պետական ծառայողները: Երբ աշխատակիցներից մեկը մասնակցում է ծրագրի բյուջեի կազմման գործընթացին, գնման հայտ է ներկայացնում, ուսումնասիրում է ծախսերի վերաբերյալ հաշվետվությունը կամ փաստաթուղթ է կազմում ներքին կամ

[1] Денежное хозяйство предприятий: учеб. для вузов / А. Ю. Казак [и др.]. Екатеринбург : АМБ, 2006. 464 с.

[2] Գծապատկերը կազմվել է հեղինակի կողմից:

արտաքին աուդիտի համար, ապա տվյալ անձը դառնում է պետական ֆինանսների կառավարման գործընթացի մասնակից: Մասնագիտական ֆինանսական տեսանկյունից՝ պետական ֆինանսների կառավարումը ներառում է գործունեության մի շարք ընդգրկուն ուղղություններ, այդ թվում՝

- *եկամուտների մոբիլիզացումը,*
- *առկա միջոցների հատկացումը տարբեր գործողությունների իրականացման համար,*
- *համապատասխան ֆինանսական միջոցների հաշվառումը:*

ՀՀ ֆինանսական համակարգում եկամուտների կառավարումը պետական ֆինանսների կառավարման համակարգի կարևոր բաղկացուցիչ մաս է հանդիսանում, որին մենք չենք անդրադառնա, քանի որ այն առանձին լայնածավալ ուսումնասիրություն է պահանջում[1]: Պետական ֆինանսական կառավարման ոլորտում տարբեր գործընթացները ձևավորվում են բյուջետային ցիկլի շրջանակներում: Բյուջետային ցիկլը պետական ֆինանսների կառավարման կարևոր բաղկացուցիչ մաս է, որի նպատակն է ապահովել պետական ծախսերի պատշաճ պլանավորումը, հաստատումը, իրականացումը և հաշվառումը:

ՀՀ պետական բյուջեն ֆինանսական կառավարման գործընթացի առանցքային քաղաքական փաստաթուղթ է: Թեև կողմնակի դիտորդի տեսանկյունից բյուջեն կարող է դիտարկվել որպես տարբեր ֆինանսական թվերի սոսկ տեխնիկական պատկեր, իրականում այն ունի ավելի մեծ նշանակություն: Հայաստանի Հանրապետության պետական և համայնքի բյուջեները՝ պետությանը և տեղական ինքնակառավարման մարմիններ՝ Սահմանադրությամբ և օրենքներով վերապահված լիազորությունների իրականացման համար անհրաժեշտ դրամական միջոցների ձևավորման և ծախսման որոշակի ժամանակահատվածի ֆինանսական ծրագրեր են, որոնք կազմվում, քննարկվում և հաստատվում են Սահմանադրությամբ և օրենքով սահմանված կարգով[2]: Ժողովրդավարական երկրներում բյուջեն կառավարության արձագանքն է քաղաքացիների կարիքներին և առաջնահերթություններին: Այդ կարիքները ձևակերպված են քաղաքականության նպատակներում, որոնք կարող են լինել որակական (օրինակ՝ երկրի անվտանգության ներուժի մեծացում) և քանակական (օրինակ՝ շուկայի հավասարակշռում): Քաղաքականության նպատակների մեծ մասի

---

[1] Հեղինակի կողմից: Հարկ է նշել, որ եկամուտների կառավարումը սերտորեն առնչվում է ծախսերի կառավարմանը՝ հատկապես ընդհանուր բյուջեի որոշման և տարեկան կտրվածքով դրամական հոսքերի կառավարման համատեքստում:

[2] «Հայաստանի Հանրապետության բյուջետային համակարգի մասին» ՀՀ օրենքը, ՀՕ-137,ընդունված 24.06.1997թ. հոդված 2, մաս 1-2:

պարագայում պահանջվում են պետական ֆինանսական ռեսուրսներ, որոնք կարող են ձևավորվել միայն հարկերի և վճարների հավաքագրման միջոցով: Քանի որ այդ ռեսուրսները սահմանափակ են, բյուջեի ծախսային մասն արտացոլում է այն իրողությունը, թե ինչպես է կառավարությունը պետական ռեսուրսների ներդրման միջոցով պլանավորում սահմանել առաջնահերթությունները և կիրառել ռեսուրսները՝ իր տարեկան և բազմամյա նպատակներն իրականացնելու համար:

Բյուջետավորմանն առնչվող ազգային գործելակերպերը տարբեր երկրներում տարբեր են և մեծապես պայմանավորված են քաղաքական, իրավական, սահմանադրական, ինստիտուցիոնալ և մշակութային առանձնահատկություններով: Կարևոր է, որ երկրները հստակեցնեն և կառավարեն իրենց ազգային ռեսուրսները՝ հաշվի առնելով յուրաքանչյուր երկրին բնորոշ հանգամանքները՝ միևնույն ժամանակ առաջնորդվելով համընդհանուր բյուջետային սկզբունքներով:

Պետական բյուջեի կառավարման ոլորտը սովորաբար կարգավորվում է բյուջեի մասին համընդգրկուն օրենսդրությամբ: Բյուջեի մասին հիմնական օրենքով կարգավորվում են բյուջետային գործընթացների բոլոր փուլերը՝ կազմման փուլից մինչև հաստատում, կատարում և վերահսկում: Այն նաև սահմանում է բյուջեի կառավարման հիմնական սկզբունքները: ՀՀ բյուջետային գործընթացը՝ յուրաքանչյուր բյուջետային տարվա բյուջեները կազմելու, քննարկելու, հաստատելու և կատարելու, դրանց տարեկան հաշվետվությունը հաստատելու ուղղությամբ պետական և տեղական ինքնակառավարման մարմինների՝ օրենքով կանոնակարգված գործունեությունն է[1]: Բյուջեի կազմման և իրականացման համար պետք է հիմք հանդիսանան միջազգայնորեն ընդունված բյուջետային սկզբունքները: Այդ սկզբունքներն իրենց մեջ ներառում են լավագույն միջազգային փորձառությունը և կարող են ուղեցույց հանդիսանալ բյուջետային ցիկլի բոլոր փուլերի համար:

Պատշաճ կառավարվող երկրներում պետական ֆինանսական կառավարման հիմնական սկզբունքը կայանում է նրանում, որ երկրի գործադիր մարմինը չի կարող հանրությունից գումար վերցնել և ոչ էլ ծախսել այդ գումարը՝ քանի դեռ չի ստացել օրենսդիր մարմնի հավանությունը, որը հանդես է գալիս որպես քաղաքացիների ներկայացուցչական մարմին[2]: ՀՀ-ում ծախսերի և եկամուտների հաստատումը տրամադրվում է տարեկան բյուջեի մասին օրենքով: Չնայած այն հանգամանքին, որ ՀՀ բյուջեն

---

[1] Նույն տեղը՝ հոդված 6, մաս 1:

[2] **S. Schiavo-Campo,** “The Budget and its Coverage”, in A. Shah, Budgeting and Budgetary Institutions, Governance and Accountability Series, the World Bank, p. 53.

կազմվում է տարեկան կտրվածքով, այն ներառում է նաև երկարաժամկետ կանխատեսում: Բազմաթիվ նախագծերի և ծրագրերի իրականացման համար պահանջվում է ավելի քան մեկ տարի, կամ դրանք կարող են ֆինանսական ազդեցություն ունենալ հետագա տարիների վրա: Երկարաժամկետ կանխատեսումը սովորաբար ենթադրում է ավելի ընդգրկուն բյուջետային շրջանակի կազմում՝ միջնաժամկետ հեռանկարով, որով սահմանվում են միջնաժամկետ ծախսերի առաջնահերթությունները և բյուջեի որոշակի սահմանափակումները, որոնց հիման վրա կարող են մշակվել և հստակեցվել ոլորտային պլանները:

Յուրաքանչյուր տարի կառավարությունը ներկայացնում է առաջիկա երեք տարիների պետական միջնաժամկետ ծախսերի ծրագիրը (ՄԺԾԾ), որն իրենից ներկայացնում է կառավարության հարկաբյուջետային և ծախսային քաղաքականության հիմնական ուղղությունները, նպատակները և սկզբունքներն արտացոլող կարևոր փաստաթուղթ: ՄԺԾԾ-ի մշակման նպատակն է հնարավորություն ստեղծել կառավարության համար կառավարելու պետական հատվածի ֆինանսական ռեսուրսներն իր միջնաժամկետ հարկաբյուջետային նպատակներին և քաղաքականության գերակայություններին համապատասխան: Միջնաժամկետ ծախսերի ծրագիրը ծառայում է հիմք՝ պետական բյուջեի նախագծի մշակման աշխատանքների համար[1]: ՄԺԾԾ փաստաթուղթը հանդիսանում է նաև տնտեսավարողների հետ կառավարության հաղորդակցության հիմնական գործիքներից մեկը, քանի որ արտացոլում է կառավարության մտադրություններն առաջիկա տարիների քաղաքականության վերաբերյալ՝ ձևավորելով համապատասխան սպասումներ տնտեսությունում:

Ինչպես աշխարհի շատ երկրներում, այնպես էլ ՀՀ-ում կիրառվում է ծրագրային բյուջետավորում, որը պետական ֆինանսների պատշաճ կառավարման միջոց է դառնում: Ծրագրային բյուջետավորումը բյուջեի կազմակերպման և դասակարգման մեթոդ է՝ ընդհանուր նպատակներ ունեցող ծրագրերի հիման վրա, որը փոխարինում է վարչարարական կամ մուտքային տողերի համաձայն տրամադրվող ֆինանսավորմանը: Պլանավորման, ծրագրավորման և բյուջետավորման համակարգը (ՊԾԲՀ/PPBS) առաջին անգամ կիրառվել է ԱՄՆ-ում[2] (20-րդ դարի 60-ա-

---

[1] «Հայաստանի Հանրապետության բյուջետային համակարգի մասին» ՀՀ օրենքը, ՀՕ-137,ընդունված 24.06.1997թ. հոդված 21, մաս 2[1]:

[2] Աղբյուրը՝ Defence Budget Transparency on the Internet, by Kate Starkey and Andri van Meny Information & Security, Հատոր 5-րդ, 2000թ. C4 in Defence of Reengineering; IPU, DCAF, “Parliamentary Oversight of the Security Sector”, 2003թ.

կան թվականների սկզբին) պաշտպանության բյուջեի մշակման նպատակով, և ներկայումս կիրառվում է բազմաթիվ այլ երկրներում:

ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Այսպիսով, հոդվածում վերլուծելով ՀՀ ֆինանսական համակարգում պետական ֆինանսական կառավարման դերն ու նշանակությունը՝ հանգում ենք այն եզրակացության, որ վերոնշյալ հիմնախնդիրների լուծումը չի կարող լինել լիարժեք, եթե ՀՀ-ում չի իրականացվում արդյունավետ պետական ֆինանսական կառավարում: Ի վերջո անընդհատ փոփոխվում են պետության առջև դրված պահանջները, և վերջինս, անկախ տնօրինվող ֆինանսական ռեսուրսների չափից, անընդհատ առերեսվում է սահմանափակ ֆինանսական ռեսուրսների արդյունավետ կառավարման խնդրին: Թեև գործող օրենսդրությունը սահմանում է պայմաններ Հայաստանի Հանրապետության յուրաքանչյուր տարվա բյուջեի, դրա կատարման վերաբերյալ հաշվետվության ներկայացման և Ազգային Ժողովի կողմից հաստատման համար, սակայն ֆինանսական գործունեության արդյունավետությունը այնքան էլ չափելի և ըմբռնելի չի դառնում: Արդյունքում՝ չի ապահովվում հետադարձ կապ ընդունված որոշումների, դրանց կատարման ընթացքի և նոր որոշումների մշակման միջև, առանց որի անհնար է հասկանալ, թե արդյոք պետական կառավարման համակարգում իրականացվող ֆինանսական կառավարումն արդյունավետ է, թե՝ ոչ:

Հաշվի առնելով վերը ներկայացված իրավիճակը, ինչպես նաև ՀՀ ֆինանսական համակարգի զարգացմանը խոչընդոտող վերհանված հիմնախնդիրները՝ ակնհայտ են դառնում հոդվածի արդիականությունն ու մանրամասն անդրադարձման անհրաժեշտությունը: Ուստի, մեր պետության, որպես ՀՀ տնտեսության կարգավորչի էությունը պետք է ամբողջացվի հետևյալ խնդիրների լուծման մեջ. ձեռնարկատիրական գործունեության ակտիվացում, ինստիտուցիոնալ բազայի ձևավորում, սեփականության իրավունքի պաշտպանում, բնակչության խոցելի շերտերի օգտին ռեսուրսների վերաբաշխում, սպառման և կուտակման միջև համամասնությունների ստեղծում, բոլոր մարզերի հավասարաչափ զարգացման պայմանների ապահովում, տնտեսական և իրավական միասնական դաշտի ստեղծում, անմիջական ֆինանսական մասնակցության ցուցաբերում տնտեսության այնպիսի ռազմավարական նշանակության ոլորտներում, ինչպիսիք են՝ պաշտպանությունը, առողջապահությունը, կրթությունը, սոցիալական ոլորտը և այլն, այս ամենի արդյունքում ստեղծելով մրցակցային հավասար պայմաններ՝ բացառելով խտրականությունը:

Կարևոր է նաև մեր պետության դերը երկրի ներդրումային գրավիչ միջավայրի ստեղծման գործում: Դրա ապահովման համար Հայաստանի Հանրապետությունը, որպես պետություն, կարող է բազմաթիվ լծակներ կիրառել, որոնցից, թերևս, ամենաէականը հարկագանձման արդյունավետ մեխանիզմի ներդրումն է, ինչպես նաև հարկային դաշտի կայունության, թափանցիկության և պարզության ապահովումը: ՀՀ հարկային համակարգը պետք է միտված լինի ոչ միայն ֆիսկալ նպատակների իրագործմանը, այլև նպաստի տնտեսության զարգացմանը: Եվ ինչպես նշում է աշխարհահռչակ տնտեսագետ Ջ. Քեյնսն իր ամենանշանավոր «Զբաղվածության, տոկոսի և փողի ընդհանուր տեսությունը» աշխատությանմեջ՝ պետությունը կոչված է անել ոչ թե այն, ինչն իր առանձին քաղաքացիներն արդեն անում են, կամ դա անել մի քիչ ավելի լավ կամ վատ, այլ անել այն, ինչ ներկայումս ոչ ոք ընդհանրապես չի անում:

Марат Манучарян, Роль и значение государственного финансового управления в финансовой системе РА - В нынешних условиях глобализации перед каждой страной, а также перед Республикой Армения стоит множество задач: региональная стабильность, укрепление суверенитета, борьба с терроризмом, агрессивная политика иностранных государств, территориальная целостность, геополитическая перестройка и многие другие проблемы, для для решения которой необходимо иметь сильную экономику и большие финансовые возможности. А залог сильного государства - стабильная экономика. Неэффективная государственная экономическая политика может привести к затяжному и глубокому кризису. Экономическая роль государства также связана с защитой прав собственности граждан, банковских вкладов и других прав. Необходимые финансовые ресурсы для осуществления всех функций государства сосредоточены в бюджетах различных уровней, образующих бюджетную систему Республики Армения. Важнейшей проблемой бюджетной системы Республики Армения является осуществление функций органов государственного управления и местного самоуправления и концентрация для этого необходимых финансовых ресурсов. Бюджетные расходы рассматриваются как часть финансовых отношений, которые связаны с использованием централизованных денежных средств государства, соблюдением органами управления конституционных норм, формированием финансовых ресурсов на всех уровнях бюджетной системы, перераспределением централизованных средств и выполнение иных государственных функций. В теории финансов и практике финансового менеджмента главная роль прежде всего

отводится разработке комплекса фундаментальных понятий, выделению и толкованию основных категорий финансового менеджмента, формулировке принципов деятельности в национальная экономика и международные отношения с точки зрения организаций государственного сектора РА, разработка универсальных инструментов на финансовом рынке, которые могут быть использованы при необходимости любой организацией.

Marat Manucharyan, The role and importance of public financial management in the financial system of the Republic of Armenia - In the current conditions of globalization, each country, as well as the Republic of Armenia, faces many tasks: regional stability, strengthening of sovereignty, the fight against terrorism, the aggressive policy of foreign states, territorial integrity, geopolitical restructuring and many other problems, for the solution of which it is necessary to have a strong economy and great financial opportunities. And the key to a strong state is a stable economy. Ineffective state economic policy can lead to a protracted and deep crisis. The economic role of the state is also related to the protection of citizens' property rights, bank deposits and other rights. The necessary financial resources for the implementation of all the functions of the state are concentrated in the budgets of various levels that form the budgetary system of the Republic of Armenia. The most important problem of the budgetary system of the Republic of Armenia is the implementation of the functions of state administration and local self-government bodies and the concentration of the necessary financial resources for this. Budget expenditures are considered as part of financial relations that are associated with the use of centralized state funds, compliance with constitutional norms by government bodies, the formation of financial resources at all levels of the budget system, the redistribution of centralized funds and the performance of other state functions. In the theory of finance and the practice of financial management, the main role is primarily given to the development of a set of fundamental concepts, the identification and interpretation of the main categories of financial management, the formulation of the principles of activity in the national economy and international relations from the point of view of public sector organizations of the Republic of Armenia, the development of universal tools in the financial market, which can be used by any organization if necessary.

Ուղարկվել է խմբագրություն 17.11.2022թ.
Գրախոսվել է 18.11.2022թ.
Ստորագրվել է տպագրության 20.11.2022թ.